

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՊԲՀ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

#### ԼԱՐԻՍԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան  
Էլ. *hmuugk*՝ [larisaravetisyan@gmail.com](mailto:larisaravetisyan@gmail.com)

#### ԱՐՏԱԿ ՀԵԲՈՅԱՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան  
Էլ. *hmuugk*՝ [heboyan.artak@gmail.com](mailto:heboyan.artak@gmail.com)

#### ԼԱԶԱՐ ԵՍԱՅԱՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան  
Էլ *hmuugk*՝ [lazyes@yandex.ru](mailto:lazyes@yandex.ru)

#### ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան  
Էլ *hmuugk*՝ [marmiga@mail.ru](mailto:marmiga@mail.ru)

#### ԱՐԱՄ ԲԱՅԿՈՎ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան  
Էլ. *hmuugk*՝ [baykovaram@yahoo.com](mailto:baykovaram@yahoo.com)

#### ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան  
Էլ. *hmuugk*՝ [avetisyan\\_an@mail.ru](mailto:avetisyan_an@mail.ru)

#### ԼՈՒՍԻՆԵ ՇԱՐԻՄԱՆՅԱՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան  
Էլ. *hmuugk*՝ [lusy1706@yandex.ru](mailto:lusy1706@yandex.ru)

DOI: 10.24234/scientific.v1i48.198

## ԱՄՓՈՓՈՒՄ

Միջազգային հավատարմագրումը կրթական հաստատությունների կրթական ծրագրերի բարելավման հզոր խթան է: Հոդվածի նպատակն է ներկայացնել ստոմատոլոգիական կրթություն ստացող ուսանողների գնահատման հիմնական մեթոդները և ԵՊԲՀ «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի հավատարմագրմանն ընդառաջ ուսանողների գիտելիքների և հմտությունների գնահատման կարգի հնարավոր փոփոխությունները՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Հոդվածը ներկայացնում է ստոմատոլոգիական կրթություն ստացող ուսանողների գիտելիքների և հմտությունների գնահատման հիմունքները, ուշադրություն հրավիրելով գնահատման կարևորագույն ասպեկտներին՝ անցողիկ շեմի սահմանմանը, չգիտակցված կողմնակալությանը, հնարավոր վիճարկումներին և աուդիտին: Ներկայացվել են ձևավորող և ամփոփիչ գնահատման մեթոդները: Հիմք ընդունելով միջազգային փորձը և միջազգային հավատարմագրման համար պահանջվող գնահատման չափանիշները՝ ԵՊԲՀ «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի գնահատման մեխանիզմները պետք է ենթարկվեն զգալի բարելավման:

*Բանալի բառեր՝ կրթական ծրագիր, «Ստոմատոլոգիա», միջազգային հավատարմագրում, ձևավորող գնահատում, ամփոփիչ գնահատում, բողոքարկում, OSCE, գնահատման աուդիտ:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատումը ուսուցման գործընթացում կարևորագույն նշանակություն ունի, քանի որ ուսանողներն իրենց ծրագրում հաճախ ավելի շատ ուշադրություն են դարձնում գնահատմանը, քան ուսումնական գործընթացի որևէ այլ բաղադրիչի (Boud, 1990, p. 101-111; Kearney, 2013, p. 875-891): Ստոմատոլոգիական կրթությունն իր նախակլինիկական և կլինիկական բաղադրիչներով՝ ապահովում է նախանշված կրթական վերջնարդյունքների համապատասխանությունը պահանջվող կարողությունների մակարդակին և հնարավորություն է ընձեռում շրջանավարտներին՝ ծավալելու ինքնուրույն պրակտիկ գործունեություն (James, 2002): Գնահատման խնդիրները կարող են օգտագործվել դասախոսների կողմից ուսանողների ուսուցման ներուժն օպտիմալացնելու համար՝ նպաստելով, որ գնահատման հիմքում դրվի քննադատական մտածողության զարգացումը, մասնագիտական ինքնուրույնության ձևավորումը և շարունակական ուսուցումը՝ խթանելով ստոմատոլոգիական կրթություն տրամադրելու գործընթացում նորարարական և ստեղծագործական մոտեցումները (Singh, 2008):

Ուսումնասիրված գրականության մեջ քննարկվել են ստոմատոլոգիական կրթության շրջանակում տարբեր գնահատման մեթոդներ, սակայն այդ մեթոդների

ընտրությունը կախված է դրանց օգտագործման նպատակից՝ արդյոք այն ձևավորող թե ամփոփիչ նպատակ ունի: Ամփոփիչ գնահատումը վերջնաւոյունք-կախյալ է, իսկ ձևավորող գնահատումը վերաբերում է ուսանողի կատարողականության ընթացքի գնահատմանը (Schuwirth, 2011, pp: 478-485): Գնահատման մեթոդին վերագրվող հասկանիչներ են վավերականությունը (validity), հուսալիությունը (reliability), սովորելու հնարավորությունը, հասանելիությունը և այլն (Van der Vleuten, 1996): Այնուամենայնիվ, մեկ գնահատման մեթոդը չի կարող ներառել ուսանողի կարողունակության բոլոր ոլորտները, և յուրաքանչյուր մեթոդ ունի իր առավելություններն ու թերությունները: Ուստի տարբեր գնահատման մեթոդների օգտագործումը կարևոր է, որպեսզի մի մեթոդի թերությունները փոխհատուցվեն մյուսի առավելություններով, և ընտրությունը պետք է հիմնվի նպատակահարմարության վրա (van der Vleuten, 2012):

Ուսուցման գնահատման հիմնական նպատակն է որոշել, թե արդյոք ուսանողը հաջողությամբ հասել է ուսուցման վերջնարդյունքին: Սակայն, այս տեսակի գնահատումը ամբողջովին չի օգնում ուսուցման գործընթացի բարելավմանը (Schuwirth, 2011, pp:478-485): Բայց, ուսուցման համար գնահատումը կարող է հետադարձ կապով ապահովել տեղեկատվություն, ինչպես դասավանդողի այնպես էլ ուսանողի առաջընթացի վերաբերյալ և նպաստել ուսուցման նպատակներին հասնելուն (Shepard, 2000, pp.4-14): Մտացված տվյալները պետք է օգտագործվեն դասախոսների կողմից դասընթացների վերանայման և հետագա զարգացման համար, քանի որ հետադարձ կապը նպաստում է ուսանողների ուսուցման բարելավմանը և կարող է լինել ինֆորմատիվ ու աջակցող՝ նպաստելով հետագա ուսուցման լավարկմանը (Kearney, 2013, pp. 875-891): Աս ամենին զուգահեռ՝ ավանդական ուսուցման մեթոդներն ունեն թերություններ, որոնք են սիմուլացիայի իրականացման պակասը, դասախոսների կողմից կիրառվող ռեսուրսների սակավությունը, սահմանափակ ժամանակը, ինչպես նաև գնահատման մեթոդների և հետադարձ կապի սուբյեկտիվությունը (Xia, 2013, pp. 437-447): Այս թերությունները հաղթահարելու համար, որպես արդյունավետ և հուսալի գործիք, առաջարկվել է օգտագործել ստոմատոլոգիական համակարգչային գնահատման համակարգեր (Sadid-Zadeh, 2018, pp. 189-195; Saini, 2024, pp. 1-18):

Ստոմատոլոգիական կրթության շրջանակում գնահատման մեթոդների ընտրությունը հաճախ տարաբնույթ քննարկումների առիթ է հանդիսանում: Այս հոդվածի նպատակն է ներկայացնել ստոմատոլոգիական կրթություն ստացող ուսանողների գիտելիքների և հմտությունների գնահատման հիմնական մեթոդները և ԵՊԲՀ «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի հավատարմագրմանն ընդառաջ՝ գնահատման կարգի հնարավոր փոփոխությունները՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ստոմատոլոգիական կրթության ոլորտում գործնական հմտությունների ստուգման գործընթացն ընդգրկում է գնահատման այնպիսի մեթոդների կիրառում, որոնք բարձր ճշգրտությամբ չափում են ուսանողների կարողունակությունը: «Արդյունավետ նախագծում» հասկացությունը ենթադրում է, թե արդյոք գնահատման համակարգը հստակ գնահատում է համապատասխան գիտելիքներ և հմտություններ (բովանդակային վավերականություն (validity)), և արդյոք այն արդար է բոլոր ուսանողների համար (հուսալիություն (reliability)): Վավերականությունը չափում է գնահատման եղանակի կոմպետենտության աստիճանը: Գնահատման վավերականության աստիճանը այն չափն է, որով որոշվում է, թե որքանով է գնահատման գործիքը չափում այն, ինչի համար նախատեսված է: Այն որոշում է, թե որքանով է կոմպետենտ գնահատման գործիքը և ինչ ճշգրտությամբ է գնահատում գիտելիքը, ունակությունները, հմտությունները: Եթե գնահատումը վավերական է, արդյունքները կարելի է մեկնաբանել վստահաբար և կիրառել նպատակային կերպով: Այն բաժանվում է բովանդակային (ուղղակի) և կառուցվածքային (անուղղակի) վավերականությունների: Գնահատման անաչառությունն ապահովելու համար, քննության պատասխանատուները կիրառում են տարբեր գործիքներ, ինչպիսիք են բազմակի ընտրության հարցերը (MCQ)՝ գիտելիքների գնահատման համար, օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննությունը (OSCE)՝ հմտությունների գնահատման համար, բանավոր կամ գրավոր քննությունները՝ որոշումներ կայացնելու և քննադատական մտածողության ունակությունների գնահատման համար: Բացի այդ, անցողիկ միավորները որոշելու ժամանակ կարող է ներառվել ստանդարտ կարգավորումը, որը ցույց է տալիս քննվողի մրցակցային ունակությունները (Schuwirth, 2018, pp. 275-289; Avetisyan, 2022; Ahmed, 2024):

## **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

### **Ուսումնական ծրագրի համապատասխանեցում կրթական վերջնարդյունքներին**

Ուսումնական ծրագրի համապատասխանեցման (curriculum alignment) գործընթացն ապահովում է ուսումնական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությունը դասավանդման մեթոդներին և գնահատման գործընթացին: Լավ համապատասխանեցված կրթական ծրագիրը երաշխավորում է, որ վերջնական թեստավորումը հիմնված կլինի այն գիտելիքների և հմտությունների վրա, որոնք ուսանողները ձեռք են բերել ուսումնառության ընթացքում: Ծրագրի համապատասխանեցումը երաշխավորում է նաև, որ քննության ընթացքում չեն լինի անձանոթ հարցեր կամ այնպիսի հարցեր, որոնք ընդգրկված չեն եղել համապատասխան

դասընթացում (Sarfaraz, 2024; Mahzari, 2023, pp. 1001-1012; Մուրադյան, 2020, էջ 23-29; Karakhanyan, 2017, p. 85):

### **Զգիտակցված կողմնակալություն**

Գոյություն ունի չգիտակցված կողմնակալություն (unconscious bias), որն անհրաժեշտ է ժամանակին հայտնաբերել գնահատման հնարավոր սխալմունքից խուսափելու համար: Զգիտակցված կողմնակալությունը ներկայացնում է քննողի կողմից ցուցաբերվող կողմնակալ վերաբերմունք որոշ անհատների, ռասայի, սեռի, խմբային պատկանելիության, փոքրամասնության ներկայացուցիչների նկատմամբ: Գրավոր քննությունների պարագայում, երբ ուսանողները պատասխանում են տարբեր հարցերի՝ ձևակերպելով իրենց ուրույն մտքերը, պետք է ապահովել գնահատման անանունությունը: Կարևոր է ունենալ հստակ մշակված գնահատման չափանիշներ, որոնք կլինեն պարզ, օբյեկտիվ և քննության մասնակիցներին հասանելի: Մինչ քննությունը ուսանողները պետք է տեղեկացվեն գնահատման կարգի վերաբերյալ: Դա կարող է օգտակար լինել քննությանը պատրաստվելիս: Կլինիկական բաղադրամասեր ունեցող քննությունները, որտեղ ուսանողները իրական կամ սիմուլացված կլինիկական միջավայրերում գնահատվում են ակադեմիական անձնակազմի կողմից, մեծապես ենթակա են չգիտակցված կողմնակալության, մարդկային սխալների, հատկապես այն գնահատողների մոտ, ովքեր չեն գիտակցում այդ մասին: Ուստի, գնահատման գործընթացին մասնակցող ակադեմիական անձնակազմը պետք է անցնի համապատասխան ստուգմանը նվիրված դասընթաց, ուսուցում և պարբերական վերապատրաստումներ, որպեսզի կարողանա արդյունավետորեն պայքարել չգիտակցված կողմնակալության դեմ: Ավելին, պետք է ներդրվի հետադարձ կապի մեխանիզմ, որպեսզի ուսանողները կարողանան կիսվել իրենց կարծիքներով քննության գործընթացի վերաբերյալ՝ քննության ավարտից հետո: Այս արձագանքները կարող են օգտակար լինել քննության գործընթացի բարելավման համար: Կողմնակալությունը նվազեցնելու համար օգտակար է բաց մթնոլորտի ձևավորումը՝ ուսումնասիրելով և քննարկելով լավագույն փորձերը (Jasmine R Marcelin, 2019, pp. 62-73; Heboyan, 2022):

### **Գնահատման աուդիտ**

Քննությունների արդյունքների աուդիտը պահանջում է քննությունների գործընթացի վերաբերյալ փորձառություն, ուստի այն լավագույնս կատարվում է փորձագետների կամ բենչմարքինգի փորձ ունեցող գործընկեր կազմակերպությունների կողմից, որոնք լավ ծանոթ են քննությունների գործընթացին և ակտիվորեն ներգրավված են դրանցում: Գնահատողների աուդիտի գործընթացը ենթադրում է քննող մարմինների որոշումների և գործողությունների վերահսկում: Սա նպաստում է, որ քննող մարմինը ճշգրտորեն հետևի գնահատման հաստատված չափանիշներին: Աուդիտորները կարող են

ստուգել գնահատման չափանիշները (գնահատման միանմանություն բոլոր ուսանողների համար), գնահատել անկողմնակալությունը, տրամադրել պարզաբանում և ուսուցանել: Առաջինը նպաստում է քննության նկատմամբ վստահության ամրապնդմանը՝ ապահովելով պահանջվող չափանիշներին համապատասխան գնահատում: Պարբերական առաջնությունները կարող են բացահայտել չգիտակցված կողմնակալությունը և ուղղորդել գնահատողներին դրանք արդյունավետ հաղթահարելու հարցում (Hasan, 2024):

### **Գնահատման անցողիկ շեմի սահմանում և հնարավոր վիճարկումներ**

Համաձայն ԱՄՆ Կրթության Թեստավորման Ծառայության (Educational Testing Service (ETS))՝ ստանդարտ կարգավորումը մեթոդաբանություն է, որը կիրառվում հմտությունների մակարդակները և դրանց համապատասխանող նվազագույն անցողիկ շեմերը սահմանելու համար: Կա ստանդարտ սահմանման երկու հիմնական մոտեցում. նորմա-հղման (Norm-referenced) և ստանդարտ-հղման (Standard-referenced): Նորմա-հղման մոտեցումը ենթադրում է, որ տարվա ընթացքում թեստը հանձնողների 75%-ը կհաղթահարի այն և կհամարվի ռեֆերենս խումբ: Ստանդարտ-հղման մոտեցման դեպքում յուրաքանչյուր ուսանողից ակնկալվում է որոշակի մակարդակի կոմպետենտություն՝ քննությունը հաղթահարելու համար, և գնահատվում է հստակ չափանիշների, այլ ոչ թե հղման խմբի համեմատ (Scielzo, 2023, pp. 206-221):

Հանձնում-չհանձնում չափանիշը թեստի այն սահմանային միավորն է, որը ցույց է տալիս կոմպետենտության նվազագույն բավարար մակարդակը և ընտրում է բավարար առաջադիմությամբ ուսանողներին: Թեև չափանիշները կարող են սահմանվել կամայական որոշումների միջոցով, այնուամենայնիվ չափանիշների սահմանումը պետք է լինի դատողությունների վրա հիմնված գործընթաց, որը կհանգեցնի համակարգված և վերաբարձարի հանձնում-չհանձնում չափանիշների սահմանման (Cizek, 2007, pp. 20-2):

Ծառ ուսումնասիրություններ չափանիշների սահմանման մեթոդների վերաբերյալ կատարվել են գրավոր գնահատումների ոլորտում: Սակայն, վերջին ուսումնասիրությունները կենտրոնացել են կատարողականությունը գնահատող քննությունների, օրինակ՝ օբյեկտիվ կառուցված կլինիկական քննությունների (OSCE) համար սահմանային միավորներ սահմանելու վրա (Boursicot, 2007, pp. 1024-31; Schoonheim-Klein, 2009, pp. 162-71; Jalili, 2011, pp. 1199-208):

Անցողիկ շեմի սահմանման ընթացակարգերը կարող են լինել քննության վրա կենտրոնացած, որտեղ թեստի բովանդակությունը գնահատվում է փորձագետների կողմից (օրինակ՝ Angoff-ի մեթոդ), կամ՝ քննվողների վրա կենտրոնացած, որտեղ փորձագետների որոշումները հիմնված են քննվողների իրական կատարողականության վրա (Liu, 2008, pp. 656-3): Վերջին այս մեթոդներից մեկն է սահմանային ռեգրեսիայի մեթոդը (Borderline Regression Method-BRM): BRM-ի դեպքում գնահատողը յուրաքանչյուր կայանում

ուսանողի կատարողականը գնահատում է՝ լրացնելով ստուգաթերթը (checklist) և ընդհանուր գնահատման սանդղակը (global rating scale): Յուրաքանչյուր կայանում բոլոր քննվողների ստուգաթերթերի միավորները համեմատվում են ընդհանուր գնահատման սանդղակի միավորների հետ՝ ձևավորելով գծային հավասարում: Սահմանային կատարողականը ներկայացնող ընդհանուր միավորը (օրինակ. 2 միավոր՝ ընդհանուր կատարողականի գնահատման սանդղակում) ներդրվում է հաշվարկային հավասարման մեջ՝ ստուգաթերթի անցողիկ սահմանային գնահատականը (անցողիկ շեմ) որոշելու նպատակով (Moreno-López, 2022, pp. 686-691):

Այս մեթոդն ունի մի քանի առավելություն. այն հիմնված է բոլոր քննվողների իրական կատարողականի վրա, օգտագործում է փորձագետ-գնահատողների դատողությունները և ժամանակատար չէ (Davison, 2010, pp. 582-5): Մեկ այլ կարևոր առավելություն է այն, որ BRM-ը կարող է օգտագործվել OSCE-ի որակը գնահատելու համար (Pell, 2010, pp.802-11):

Angoff-ի մեթոդը կարելի է համարել դասական ստանդարտ, որն ունի մեծ կիրառություն: Այս մեթոդի կիրառման դեպքում, ոլորտի փորձառու կրթական մասնագետները գնահատում են քննության մեջ ներառված բոլոր հարցերը և որոշվում է հավանականությունը, թե արդյոք «նվազագույն կոմպետենտ» թեկնածուն կկարողանա ճիշտ պատասխանել այդ հարցին: Օրինակ, հեշտ հարցերի դեպքում հավանականությունը կարող է բարձր լինել, իսկ դժվար հարցերի դեպքում՝ ցածր: Բոլոր հարցերի գնահատումից հետո հավանականությունները միջինացվում են՝ անցողիկ շեմը սահմանելու համար: Angoff-ի մեթոդն արժեքավոր է, քանի որ այն անցողիկ շեմեր սահմանելու տվյալահեն մոտեցում է առաջարկում և չի հիմնվում կամայական որոշումների վրա: Այս մեթոդը կարող է հատկապես արդյունավետ լինել բարձր վճռորոշ քննություններում, որտեղ կոմպետենտության ճշգրիտ գնահատումը չափազանց կարևոր է (Mubusuke, 2017, pp. 171-175):

1996 թվականին S.E. Phillips-ը բարձրացրեց քննության նվազագույն անցողիկ միավորների վերաբերյալ կարևոր խնդիր: Իր հոդվածում նա զգուշացնում է, որ սահմանված անցողիկ գնահատականի հետ իրավական խնդիրներ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ գնահատումը թվում է անարդար կամ կամայական, չափում է վերաբերմունք կամ արժեքներ, համապատասխանեցված չէ հաշմանդամներին և/կամ քննական նյութերը նախապես սովորելու հնարավորություն չի ընձեռվում: Phillips-ը նշում էր, որ եթե անցողիկ միավորները սահմանվում են առանց տարբեր ուսանողական խմբերի և քննության գործընթացում հնարավոր կողմնակալությունները հաշվի առնելու, ապա դրանք կարող են վիճարկվել դատարանում: Գնահատման գործընթացում հնարավոր խտրականությունից խուսափելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների

անձնական տարբեր առանձնահատկություններ, ինչպիսիք են էթնիկական խմբերը, մշակույթը, լեզուն և կրթական հիմքը: Եթե նշված կողմնակալությունները համապատասխան կերպով չեն հասցեագրվում, քննության արդարությունը և թափանցիկությունը կարող են հարցականի տակ դրվել՝ հանգեցնելով իրավական խնդիրների: Իրավական խնդիրներից խուսափելու համար քննություն կազմակերպող մարմինը անցողիկ շեմը սահմանելիս պետք է հաշվի առնի հնարավոր բոլոր կողմնակալությունները (Phillips, 1996, pp. 5-13):

### **Քննության արդյունքների բողոքարկում**

Քննության արդյունքների բողոքարկման գործընթացը ուսանողներին հնարավորություն է տալիս վիճարկել իրենց գնահատականները, եթե նրանք կարծում են, որ իրենց արդար չեն գնահատել: Բողոքարկման գործընթացում հնարավոր խնդիրներին է պատկանում այն հանգամանքը, որ հրավիրված նեղ մասնագետը տվյալ ամբիոնի ներկայացուցիչ է և կա հավանականություն, որ նույնիսկ այն պարագայում, երբ ուսանողը ճիշտ է, դասախոսը կարող է պաշտպանել ամբիոնի շահերը և դեմ լինել գնահատականի բարձրացմանը՝ փորձելով իր նեղ մասնագիտական պարզաբանումներով հակառակը համոզել ներկաներին:

### **Մամուլի և լրատվամիջոցների դերը՝ քննությունների արդյունքները լուսաբանելիս**

Հաղորդվում է, որ մամուլն ու լրատվամիջոցներն ունեն եզակի դեր՝ քննության գործընթացում արձանագրված բոլոր հաջողությունները, անհամապատասխանություններն ու անարդարությունները լուսաբանելու հարցում: Մասնավորապես, մամուլը կարող է բարձրացնել հանրային իրազեկվածությունը, խրախուսել քննող դասախոսներին, որպեսզի նրանք բարելավեն իրենց աշխատանքային պրակտիկան և աշխատեն ավելի թափանցիկ: Մամուլը կարող է ոչ միայն ընդգծել առկա խնդիրները, այլև ներկայացնել բարելավումներն ու նորարարությունները, որոնք նպաստում են գնահատման չափանիշների մակարդակի բարձրացմանը (Ayers, 2023, pp. 909-909):

### **Ձևավորող գնահատում**

### **Ստոմատոլոգիական կրթության մեջ ընթացիկ գնահատմամբ զբաղվող դասավանդողի կարևորագույն հատկանիշները**

Ստոմատոլոգիական կրթության մեջ ձևավորող գնահատում իրականացնող հմուտ դասախոսի կարևորագույն հատկանիշներն են (Schildkamp, 2020, p. 101602).

- ✓ կարողանալ ապահովել կառուցողական և շարունակական հետադարձ կապ, որը կօգնի ուսանողներին բարելավել իրենց տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները: Հետադարձ կապը պետք է լինի հստակ, գործնական, պարզ և

անհատականացված՝ բավարարելով ուսանողի հիմնական ուսումնական կարիքները:

- ✓ կարողանալ ընդգծել յուրաքանչյուր ուսանողի ուժեղ ու թույլ կողմերը և բարելավման ենթակա ոլորտները:
- ✓ ունենալ բարձր մակարդակի էմպաթիա (ապրումակցում) և կարողանալ խրախուսել ուսանողներին, քանի որ բժշկական կրթությունն ստացող ուսանողները հաճախ գործում են սթրեսային պայմաններում: Նրանք պետք է կարողանան ստեղծել բարենպաստ միջավայր, որտեղ ուսանողները կարող են հարմարավետ սովորել:

### **Ձևավորող գնահատման հիմնական առավելությունները**

Ձևավորող գնահատումն ունի բազմաթիվ առավելություններ (Jain, 2012, pp. 68-70), ինչպիսիք են՝

- ✓ Նպաստում է ուսանողների շարունակական զարգացմանը:
- ✓ Օգնում է ուսանողներին հասկանալու ուսումնառության նպատակները:
- ✓ Նպաստում է ինքնաանդրադարձին:
- ✓ Ուսանողներին հնարավորություն է տալիս հասկանալու իրենց ուժեղ կողմերը և բարելավման ենթակա ոլորտները՝ բարձրացնելով ուսման արդյունավետությունը:
- ✓ Օգնում է պատրաստել կոմպետենտ և ինքնավստահ բժիշկներ:

Ձևավորող գնահատման մասին տեղեկատվության տրամադրումը և դրա ներառումը ստոմատոլոգիական կրթության ծրագրում պետք է համահունչ լինի այնպիսի նպատակներին, ինչպիսիք են ուսուցման բարելավումը, ինքնաանդրադարձը և ունակությունների զարգացումը: Ձևավորող գնահատումը պետք է ներդնի կրթական ծրագրի բոլոր փուլերում: Պետք է դիտարկել ինքնագնահատման, թեստավորման կամ գործընկերային գնահատման տարբերակները:

Կլինիկական ունակությունների գնահատման նպատակով տեղին է օգտագործել OSCE և սիմուլացված հիվանդների հետ աշխատանքը: Գնահատականի ձևավորման վերաբերյալ մեկնաբանության տրամադրումը ուսանողներին պետք է լինի համապարփակ, ուսուցողական և հաճախակի բնույթ կրի: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում կարելի է վերլուծել և պարզաբանել ծագած բոլոր հարցերը, որոնք կարող են օգտակար լինել ընթացիկ առաջընթացը գնահատելու համար: Կլինիկական դեպքերի քննարկումները և խմբային աշխատանքները կարող են արժեքավոր լինել գործընկերներից կառուցողական արձագանք ստանալու համար (Arja, 2018): Առցանց հարթակների և վիրտուալ սիմուլացիաների կիրառումն անչափ կարևոր է անմիջական արձագանք ստանալու, հմտությունների զարգացման և առաջընթացի գնահատման համար: Վերջերս մեր կողմից իրականացված գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ վիրտուալ իրականության

սիմուլյատորները կարող են բարելավել ուսուցման արդյունավետությունը (Youssef Abdullah Algarni, 2024; Saini, 2024):

Ձևավորող գնահատման նպատակը շարունակական ուսուցումն ու զարգացումն ապահովելն է: Այս գնահատման գործիքն օգնում է բացահայտել ուսանողների թույլ կողմերը, որոնց վրա անհրաժեշտ է կենտրոնանալ՝ մինչև ամփոփիչ գնահատումը:

Ձևավորող գնահատման ընթացում ստացված արձագանքը կարող է օգտակար լինել շարունակական ինքնազարգացման և ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման համար, ինչը կենսական նշանակություն ունի ապագա ստոմատոլոգիական գործունեության համար: Ուսանողների կանոնավոր և ինտերակտիվ գնահատումները նպաստում են դասընթացին նրանց ակտիվ մասնակցությանը և մոտիվացիային: Բացի այդ, դա կարող է օգնել նվազեցնել անհանգստությունը և բարձրացնել ինքնավստահությունը, քանի որ ստեղծված միջավայրը ոչ թե քննադատող է, այլ խրախուսող: Այս կերպ ուսանողներն ապահով են զգում և կարող են զարգացնել գիտելիքներ, ձեռք բերել գործնական ունակություններ և վարվելակերպ, որոնք անհրաժեշտ են ստոմատոլոգիական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար (Ismail, 2022, pp. 1-23; Lone, 2023; Heboyan, 2023, pp. 7940-7942):

Ձևավորող գնահատումը կարելի է համարել այն բազմաթիվ գնահատման տեսակներից մեկը, որը պահանջվում է ողջ կյանքի ընթացքում կարողունակություն զարգացնելու համար: Ձևավորող գնահատման հետ միասին, գնահատման այլ տեսակներն էլ ոչ պակաս կարևոր են կոմպլեքս ստոմատոլոգներ ձևավորելու համար:

### **Գնահատման տարբեր մեթոդների համեմատական բնութագիր**

Ամփոփիչ գնահատումը տեղեկատվություն է տալիս այն մասին, թե արդյոք ուսուցման վերջնարդյունքները ձեռք են բերվել դասընթացի ավարտին: Այն հաստատում է առաջընթացը: Սակայն, իր բարձր ռիսկայնության պատճառով, այն կարող է սթրեսային լինել և չի տրամադրում խորացված արձագանք՝ բարելավման համար: Չափանիշներով գնահատման դեպքում, աշխատանքը գնահատվում է նախապես որոշված չափանիշների և չափորոշիչների համաձայն (Ismail, 2022, pp. 1-23):

Նորմատիվ գնահատումը համեմատում է մրցակիցներին: Այս ձևով այն կարող է խթանել մրցակցային զարգացումը: Սակայն այն միշտ չէ, որ համահունչ է անհատական ուսուցման նպատակներին և կարող է խոչընդոտել համագործակցությունը (Park, 2023):

Ինչ վերաբերում է ինքնագնահատմանը, դա կարող է խրախուսել ուսանողներին՝ գնահատելու իրենց հմտությունները, գիտենները և թերությունները: Սակայն այն միշտ չէ, որ ճշգրիտ է՝ առանց արտաքին վավերացման (Yates, 2022, pp. 1296-1302):

Աշխատանքի վայրում գնահատումը (workplace-based assessment) օգնում է գնահատել հմտություններն իրական կլինիկական իրավիճակներում: Սակայն դրա

համապատասխանությունը և խստությունը կարող են տարբերվել՝ կախված գնահատողից (Lakhtakia, 2021; Lee, 2021, pp. 256-262):

Ողջ կյանքում կոմպետենտ լինելու համար անհրաժեշտ է օգտագործել գնահատման տարբեր տեսակների համադրություն, քանի որ ձևավորող գնահատումը ապահովում է շարունակական զարգացում, ամփոփիչ գնահատումը՝ անհրաժեշտ չափանիշներին համապատասխանելը, աշխատանքի վայրում գնահատումը՝ իրական կլինիկական իրավիճակներում կարողունակությունը, իսկ ինքնագնահատումը կարևոր է ողջ կյանքի ուսուցման համար (Lim, 2019, pp. 255-263):

### **Ատեստավորման և բողոքարկման գործընթացը Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում (ԵՊԲՀ)**

Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ անընդհատ և ինտեգրացված բարձրագույն բժշկական կրթական ծրագրի ժամկետը 5 ուսումնական տարի է: Ուսանողն իրավունք ունի ուսումնառության ընթացքում մասնակցելու համալսարանում հետազոտական ծրագրերի, գիտաժողովների, սեմինարների և համալսարանական այլ միջոցառումների: Համալսարանում բարձրագույն կրթության ուսումնական գործընթացը, որն իրականացվում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, կազմակերպվում է դասընթացների և գիտելիքների ստուգման միջոցով: Ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվում է համապատասխան կրթական ծրագրի՝ բոլոր առարկաների ծրագրերին համապատասխան: Առաջինից երրորդ կուրսերում գիտելիքների ստուգման գործընթացը կազմակերպվում է առաջին և երկրորդ կիսամյակների դասընթացների ավարտին՝ քննաշրջանում: Չորրորդից հինգերորդ կուրսերում դասընթացները կազմակերպվում են ցիկլային ձևաչափով՝ 1-4 շաբաթ տևողությամբ: Ատեստավորումը կազմակերպվում է ցիկլային դասընթացի վերջին օրը, իսկ վերահանձնումները՝ մարման շրջաններում: Ատեստավորումների նպատակն է պարզել ուսանողների մասնագիտական գիտելիքների համապատասխանությունը տվյալ առարկայի ծրագրային պահանջներին: Ուսանողները քննություններն հանձնում են բանավոր, համակարգչային թեստային և գրավոր թեստային եղանակներով՝ գնահատվելով 10 բալային համակարգով, որտեղ 5-6 բալը բավարար է, 7-8 բալը՝ լավ 9-10 բալը՝ գերազանց: Քննությունների հարցաշարերը կազմվում են մասնագիտական ամբիոնների կողմից՝ առարկայական ծրագրերին համապատասխան: Դրանք հաստատվում և տրամադրվում են ուսանողներին: Քննությունից անբավարար ստացած ուսանողին տրվում է վերահանձնելու երկու հնարավորություն՝ մարման շրջաններում: Քննությանը չմասնակցած ուսանողի կարգավիճակը համարժեք անբավարար ստացած ուսանողին (YSMU Regulations on the

Բանավոր քննություններն անցկացվում են երեքական հարց պարունակող քննական տոմսերով: Տոմսերում հարցերի բաշխումն ըստ թեմաների որոշվում է՝ ելնելով տվյալ առարկայի ուսումնական ծրագրում դրանց մասնաբաժնից: Բանավոր քննությունն ընդունում են ամբիոնի վարիչը և երկու փորձառու դասախոս՝ առնվազն երկու քննական կետերում: Բանավոր քննության ժամանակ ուսանողն իրավունք ունի քննական տոմս վերցնել մեկ անգամ՝ առանց այն փոխելու թույլտվության: Քննող դասախոսի կողմից լրացուցիչ հարցերը պետք է լինեն տոմսում ընդգրկված հարցերի վերաբերյալ: Քննող դասախոսի գործառույթներն են՝

ա) առարկայի ծրագրի պահանջներին ուսանողի գիտելիքների համապատասխանության ստուգումը,

բ) բանավոր քննության գնահատականի որոշումը:

Քննող դասախոսը ուսանողի գիտելիքները գնահատում է 10 բալային համակարգով և գնահատականը հայտնում նրան: Վիճահարույց դեպքերում վերջնական որոշումն ամբիոնի վարիչին է (ԵՊԲՀ՝ բանավոր քննությունների անցկացման կարգ):

Էլեկտրոնային թեստավորման նպատակներն են՝

սովորողների գիտելիքների անաչառ և անկողմնակալ գնահատման իրականացումը՝ նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը,

ուսանողների գիտելիքների գնահատման և թափանցիկության ապահովումը,

ուսումնական նյութի լայն ընդգրկվածության ապահովումը,

տարբեր ձևաչափերի թեստային առաջադրանքների կիրառման ապահովումը,

ուսումնական նյութի յուրացման որակի համակարգված վերլուծության իրականացումը:

Էլեկտրոնային թեստավորման դեպքում համակարգչային քննությունների կազմակերպման բաժնում քննական տարբերակները ձևավորվում են համակարգչային ծրագրով էլեկտրոնային թեստավորման բազայից թեստերի պատահական ընտրությամբ՝ էլեկտրոնային թեստավորումից անմիջապես առաջ՝ ապահովելով թեստային տարբերակների գաղտնիությունը: Էլեկտրոնային թեստավորման բազան արտացոլում է հաստատված առարկայական ծրագրի ատեստավորվող ժամանակահատվածի բովանդակությունը:

Գրավոր ստուգարքային և էլեկտրոնային քննական առարկաների թեստային յուրաքանչյուր տարբերակ պարունակում է 50 թեստ: Դրական գնահատականի շեմը 26 ճիշտ պատասխանն է: 1-3-րդ կուրսերում ուսանողների ընթացիկ ակադեմիական ակտիվությունը խթանելու նպատակով՝ մի շարք առարկաների դեպքում ներդրված է բոնուսային համակարգ, որի դեպքում կիսամյակի ընթացքում տվյալ առարկայի դասընթացների ժամանակ 5 անգամ դրական պատասխան (յուրաքանչյուրը գնահատվում է 0.1 միավոր) ունենալու դեպքում ուսանողին հնարավորություն է ընձեռվում

ատեստավորման վերջնական գնահատականը ձևավորելիս՝ ունենալու հավելյալ 0.5 միավոր բոնուս, որը սահմանային միավորների դեպքում ապահովում է 1 բալով ավելի բարձր գնահատական, իսկ անցողիկ միավորների շեմը նվազեցնում մինչև 25 ճիշտ պատասխան (YSMU Summary Certification Regulation):

Բազմաբաղադրիչ ձևաչափով ուսումնառող առարկաների դեպքում գնահատումն իրականացվում է՝ ըստ բաղադրիչների մասնաբաժինների, հաստատված սանդղակներով: Ուսանողները հարակից ոչ բժշկական առարկաների ստուգարքը ստանում են կիսամյակային դասերի ընթացիկ պատասխաններից ստացած 3 դրական գնահատականի առկայության հիման վրա: Վերջինների բացակայության դեպքում ստուգարքը պետք է հանձնեն մարման շրջաններում՝ գրավոր եղանակով, 50 թեստ պարունակող տարբերակներով:

Ուսանողի առաջադիմությունը որոշվում է՝ ըստ նրա կողմից ձևավորված ՄՈԳ-ի քննությամբ և տարբերակված ստուգարքով ավարտվող բոլոր դասընթացների գնահատականներն ու կրեդիտները: Ոչ բավարար առաջադիմության ցուցանիշ են ՄՈԳ-ի մինչև 50 տոկոս արժեքները: Առաջադիմության բավարար ցուցանիշ է ՄՈԳ-ի 50-69 տոկոսի առկայությունը: Լավ առաջադիմությունն արտահայտվում է ՄՈԳ-ի 70-89 տոկոս արժեքներով, իսկ գերազանց առաջադիմությունը՝ ՄՈԳ-ի 90 տոկոս և ավելի արժեքներով:

### **Էլեկտրոնային քննությունների արդյունքների բողոքարկումը ԵՊԲՀ-ում**

Ուսանողը կարող է էլեկտրոնային թեստավորման արդյունքները բողոքարկել ատեստավորման ավարտից հետո՝ մինչև քննական լսարանից դուրս գալը՝ ներկայացնելով քննության ընթացքում նախապես ընտրված՝ բողոքարկման ենթակա թեստերի համարները: Բողոքարկման հանձնաժողովը վերանայում է ուսանողների պարզաբանումները, անհրաժեշտության դեպքում վերագնահատում քննության արդյունքները և քննարկում հնարավոր սխալներ: Էլեկտրոնային թեստավորման արդյունքների բողոքարկման համար հիմք կարող են լինել՝

թեստային հարցի սխալ ձևակերպումը,

թեստային հարցի՝ ճիշտ պատասխան չունենալը,

թեստային հարցի՝ առարկայի ուսումնական ծրագրի շրջանակներից դուրս լինելը,

ծրագրային համակարգի տեխնիկական անսարքությունը:

Բողոքարկման դեպքում համապատասխան ֆակուլտետի դեկանի կամ փոխդեկանի, ամբիոնի ներկայացուցիչների (ամբիոնի վարիչ կամ ուսումնական մասի պատասխանատու կամ թեստերի պատասխանատու) և ուսանողի մասնակցությամբ լսարանում համակարգչով ներկայացվում է ուսանողի աշխատանքը, որտեղ ամրագրված է թեստային

հարցի ճիշտ պատասխանը և ուսանողի կողմից ընտրած պատասխանը: Իրականացվում է բողոքարկվող թեստի բովանդակային վերլուծություն: Արդյունքում կարող է ընդունվել հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

բողոքարկող ուսանողի գնահատականը թողնել անփոփոխ,  
բողոքարկող ուսանողի գնահատականը բարձրացնել:

Վերանայման արդյունքները հաղորդվում են ուսանողին՝ հստակ հիմնավորումներով:

Ընդունված որոշման հետ ուսանողի չհամաձայնվելու դեպքում, ուսանողն իրավունք ունի բողոքարկելու ընդունված որոշումը (կրկնակի բողոքարկում): Կրկնակի բողոքարկումն անցկացվում է նույն օրը՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, դեկանի կամ փոխդեկանի, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հրավերով համապատասխան ոլորտի մասնագետի և բողոքարկող ուսանողի մասնակցությամբ: Այս դեպքում ամբիոնի և ուսանողի միջև անհամաձայնության դեպքում վերջնական որոշումը կայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը (*YSMU Electronic Test*

Բողոքարկման մեխանիզմը բարձրացնում է քննությունների նկատմամբ վստահությունն ու արդարությունը: Այս կերպ հնարավոր է հայտնաբերել և ուղղել տարբեր սխալներ և թ

#### ե **Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ ամփոփիչ ատեստավորումը ԵՊԲՀ**

Քտոմատոլոգիա» մասնագիտությամբ «ԲԺՅԼ ստոմատոլոգ» որակավորում շնորհելու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ են սահմանված «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» թռարկաներից: Ամփոփիչ ատեստավորման առարկայական քննությունների իարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները՝ տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքերի հիման վրա մշակված առարկայական ծրագրերին համապատասխան: Բրանք հաստատվում և շրջանավարտներին են տրամադրվում ամփոփիչ ատեստավորումից 3 ամիս առաջ:

*Ամփոփիչ ատեստավորումը բաղկացած է հետևյալ 3 փուլերից.*

Կործնական ունակությունների գնահատում, որն իրականացվում է համապատասխան թարժասարքերի վրա աշխատանքի արդյունքում (համաձայն յուրաքանչյուր ուսանողի կողմից պատահականորեն ընտրված տոմսում ընդգրկված հարցերի): Առաջիկայում նախատեսվում է այս փուլը կազմակերպել Օբյեկտիվ կառուցված կլինիկական քննության, կրնատ՝ ՕԿԿԶ (Objective Structured Clinical Examination, կրնատ՝ OSCE ձևաչափով), գռարկայական համակարգչային թեստավորում, նռարկայական բանավոր քննություն:

Ֆվյալ առարկայի ատեստավորման յուրաքանչյուր փուլի դրական արդյունքը ապահովում

Է հաջորդ փուլին ուսանողի մասնակցության իրավունքը: Յուրաքանչյուր առարկայի վերջնական գնահատականը ձևավորվում է երեք փուլերի դրական արդյունքների առկայության դեպքում: Ստոմատոլոգիական ֆակուլտետի «Ստոմատոլոգիա» մասնագիտության դեպքում յուրաքանչյուր առարկայի վերջնական գնահատականը (10 բալային համակարգով) ձևավորվում է ատեստավորման փուլերին հատկացված հետևյալ համամասնությամբ՝

գործնական ունակությունների գնահատում՝ 10 տոկոս,  
առարկայական համակարգչային թեստավորում՝ 40 տոկոս,  
առարկայական բանավոր քննություն՝ 50 տոկոս:

Ամփոփիչ ատեստավորման որևէ փուլում անբավարար գնահատական ստացած կամ քննության չներկայացած շրջանավարտին չի թույլատրվում մասնակցել տվյալ առարկայի քննության հաջորդ փուլերին: Ամփոփիչ ատեստավորման ընթացքում որևէ առարկայի ատեստավորման ցանկացած փուլում անբավարար գնահատական ստանալը կամ քննությանը չներկայանալը շրջանավարտին չի գրկում մյուս առարկաների քննությունները հանձնելու իրավունքից:

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ «անբավարար» գնահատական ստացած կամ չներկայացած շրջանավարտին թույլատրվում է համապատասխան առարկայի չհանձնված փուլերի վերահանձնում՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին, համալսարանի կողմից սահմանված կարգով և ժամկետներում՝ տվյալ շրջանավարտի ավարտական ուսումնական տարում գործող ամփոփիչ ատեստավորման կանոնակարգին համապատասխան (*YSMU Summary Certification Regulation*):

### **Ամփոփիչ ատեստավորման բողոքարկում**

Թեստային քննության արդյունքների բողոքարկումն իրականացվում է համակարգչային լսարանում, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ՝ Էլեկտրոնային քննության բողոքարկման վերը շարադրված ընթացակարգով:

Բանավոր քննությունների բողոքարկման դեպքում բողոքարկման հանձնաժողովը, բողոքարկող շրջանավարտի ներկայությամբ դիտում է բանավոր քննության տեսաձայնագրությունը և քննարկում շրջանավարտի հետ: Բողոքարկման հանձնաժողովը բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

գնահատականը թողնել անփոփոխ,

գնահատականը բարձրացնել (*YSMU Summary Certification Regulation*):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով միջազգային փորձը և միջազգային հավատարմագրման համար պահանջվող գնահատման չափանիշները՝ «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի գնահատման մեխանիզմները կարող են ենթարկվել որոշ փոփոխությունների ու բարելավման: Մեր դիտարկմամբ կարող են իրականացվել հնարավոր հետևյալ փոփոխությունները.

- ✓ Մեծ չափով ներառել ձևավորող գնահատման բաղադրիչներ, որոնք թույլ կտան ոչ միայն գնահատել ուսանողներին, այլև հետադարձ կապի սկզբունքով բացատրել նրանց սխալները՝ պատրաստելով ամփոփիչ գնահատմանը:
- ✓ Գործնական ունակությունների կատարողականությունը գնահատել OSCE քննության միջոցով:
- ✓ Լրամշակել ընթացիկ բանավոր քննությունների բողոքարկման գործընթացի իրականացման մեխանիզմը:

## REFERENCE LIST

- Avetisyan L., Yessayan L., Heboyan A., Avetisyan A.** (2022) Dentistry education peculiarities and teaching methodology in COVID-19 pandemic. *Scientific Bulletin*, 1(43).
- Ahmed N., Aziz S., Jouhar R. et al.** (2024). Analysis of satisfaction levels and perceptions of clinical competency: a mixed method study on objective structured clinical examinations in undergraduate dental students. *BMC Med Educ*, 24, 673.
- Boud D.** (1990). Assessment and the promotion of academic values. *Studies in Higher Education*. 15(1).101–111. doi: 10.1080/03075079012331377621.
- Boursicot K. A., Roberts T. E., Pell G.** (2007). Using borderline methods to compare passing standards for OSCEs at graduation across three medical schools. *Med Educ*. 41, doi: 10.1111/j.1365-2923.2007. 02857. x.
- Cizek G. J., Bunch M. B.** (2007). Thousand Oaks. *A guide to establishing and evaluating performance standards for tests*.
- Hasan, A. and Jones, B.** (2024). Assessing the assessors: investigating the process of marking essays. *Frontiers in Oral Health*, 5. doi:<https://doi.org/10.3389/froh.2024.1272692>.
- Heboyan A.** (2022). Teaching peculiarities of facial examination and complete denture fabrication in dental education for students and clinical residents. *Scientific Bulletin*, 1(43).
- Jasmine R. Marcelin, Dawd S Siraj, Robert Victor, Shaila Kotadia, Yvonne A Maldonado** (2019). The Impact of Unconscious Bias in Healthcare: How to Recognize and Mitigate It, *The Journal of Infectious Diseases*, 220(2).

- James R.** (2002). *Assessing Learning in Australian Universities: Ideas, Strategies and Resources for Quality in Student Assessment Melbourne*. Canberra: Centre for the Study of Higher Education. Victoria, Australia: Australian Universities Teaching Committee.
- Karakhanyan S., Militosyan L., Topchyan R., Soghikyan K., Baykov A., Ayvazyan M., Khachatryan R., Gyulazyan V., Mazmanyanyan A.** (2017). A guideline for aligning academic programmes to the Armenian national qualifications framework, *85*, 107.
- Kearney S.** (2013). Improving engagement: the use of “Authentic self-and peer-assessment for learning” to enhance the student learning experience. *Assessment & Evaluation in Higher Education*. *38*(7), 875–891. doi: 10.1080/02602938.2012.751963.
- Mahzari M., AlNahedh T., Ahmed A.A., Rumyyan A.A., Shaban S. & Magzoub, M.E.** (2023). Practical Guide to Undergraduate Medical Curriculum Alignment and Mapping. *Advances in Medical Education and Practice*, *14*, 1001–1012. doi:<https://doi.org/10.2147/AMEP.S424815>.
- Muradyan A.A., Avetisyan L.R., Baykov A.V., Avetisyan G.A., Baroyan K.M.** (2020). The process of aligning educational programs at Yerevan State Medical University after M. Heratsi. *Medicine, Science and Education*, No. 30, Yerevan, 23-29.
- Sadid-Zadeh R., D’Angelo E. H., Gambacorta J.** (2018). Comparing feedback from faculty interactions and virtual assessment software in the development of psychomotor skills in preclinical fixed prosthodontics. *Clinical and Experimental Dental Research*. *4*(5), 189–195. doi: 10.1002/cre2.129.
- Saini R. S., Alarcón-Sánchez M. A. Ahmed N., Heboyan A.** (2024). Revitalizing Dental Diagnostics: A Bibliometric Analysis of the Rising Impact of 3D Imaging in Dentistry . *J Basic Clin Dent* (*1*), 1-18.
- Sarfaraz S., Surti A., Ali R. et al.** (2024). Faculty application and perceived effectiveness of cognitive psychology principles in medical education. A mixed method study. *BMC Med Educ* *24*, 911
- Singh K., Terry J.** (2008). Fostering students’ self-assessment skills for sustainable learning. *Proceedings of the Sustainability in Higher Education: Direction for Change*. Edu-Com International Conference. Khon Kaen, Thailand.
- Schuwirth, L.W.T. and Van der Vleuten, C.P.M.** (2018). How to Design a Useful Test. *Understanding Medical Education*, *30*(5), 275–289. doi:<https://doi.org/10.1002/9781119373780.ch20>.
- Schuwirth L. W. T., Van der Vleuten C. P. M.** (2011). Programmatic assessment: from assessment of learning to assessment for learning. *Medical Teacher*. *33*(6), 478–485. doi: 10.3109/0142159x.2011.565828.

- Scielzo S. A., Abdelfattah K., Ryder H. F.** (2023). Is It All About the Form? Norm- vs Criterion-Referenced Ratings and Faculty Inter-Rater Reliability. *Ochsner J.* 23(3), 206-221. doi: 10.31486/toj.23.0014. PMID: 37711480; PMCID: PMC10498947.
- Shepard L. A.** (2000). The role of assessment in a learning culture. *Educational Researcher.* 29(7), 4–14. doi: 10.3102/0013189x029007004.
- Van der Vleuten C. P. M.** (1996). The assessment of professional competence: developments, research and practical implications. *Advances in Health Sciences Education.* 1(1). 41–67. doi: 10.1007/bf00596229.
- Van der Vleuten C. P. M., Schuwirth L. W. T., Driessen E. W., et al.** (2012). A model for programmatic assessment fit for purpose. *Medical Teacher.* 34(3), 205–214. doi: 10.3109/0142159x.2012.652239.
- Xia P., Lopes A. M., Restivo M. T.** (2013). Virtual reality and haptics for dental surgery: a personal review. *The Visual Computer.* 29(5), 433–447. doi: 10.1007/s00371-012-0748-2.
- YSMU Regulations on the Organization of Higher Education**  
<https://ysmu.am/v2/wpcontent/uploads-/2023/04/%D4%B2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9.-%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%BA.pdf>
- YSMU Oral Exams Procedure** (2012). <https://ysmu.am/v2/wp-content/uploads/2023/04/b6fc5c38.pdf>

## РЕЗЮМЕ

### МОДЕРНИЗАЦИЯ СИСТЕМЫ ОЦЕНИВАНИЯ НА СТОМАТОЛОГИЧЕСКОМ ФАКУЛЬТЕТЕ ЕГМУ

**ЛАРИСА АВЕТИСЯН, АРТАК ГЕБОЯН, ЛАЗАРЬ ЕСАЯН, МАРИНА МАРКАРЯН,  
АРАМ БАЙКОВ, АННА АВЕТИСЯН, ЛУСИНЕ ШАРИМАНЯН**

Международная аккредитация является мощным стимулом для совершенствования образовательных программ учебных заведений. Цель данной статьи – представить основные методы оценки студентов, обучающихся стоматологии, а также возможные изменения в экзаменационной системе в преддверии аккредитации непрерывной и интегрированной образовательной программы «Стоматология» Ереванского государственного медицинского университета (ЕГМУ) с приведением ее в соответствие с международными стандартами. В статье рассматриваются основные принципы оценки студентов-стоматологов, акцентируется внимание на таких важных аспектах, как установление проходного порога, бессознательной предвзятости, возможных апелляциях и

аудите. Представлены методы формирующего и итогового оценивания. Основываясь на международном опыте и критериях оценки, необходимых для международной аккредитации, механизмы оценки в образовательной программе «Стоматология» ЕГМУ должны быть значительно усовершенствованы.

*Ключевые слова:* образовательная программа, «Стоматология», международная аккредитация, формирующее оценивание, суммативное оценивание, апелляция, OSCE, аудит.

## ABSTRACT

### MODERNIZATION OF THE ASSESSMENT SYSTEM AT THE YSMU FACULTY OF STOMATOLOGY

LARISA AVETISYAN, ARTAK HEBOYAN, LAZAR YESSAYAN, MARINA MARKARYAN, ARAM BAYKOV, ANNA AVETISYAN, LUSINE SHARIMANYAN

International accreditation serves as a powerful catalyst for improving educational programs in academic institutions. The purpose of this article is to present the primary assessment methods for students pursuing dental education and to outline potential changes in examination procedures within the YSMU Continuous and Integrated “Stomatology” Educational Program in preparation for accreditation, aligning them with international standards. The article discusses the fundamental principles of student assessment in dental education, highlighting key aspects such as the determination of passing thresholds, unconscious bias, potential disputes, and auditing. It presents both formative and summative assessment methods. Based on international experience and the evaluation criteria required for international accreditation, the assessment mechanisms of the YSMU Continuous and Integrated “Stomatology” Educational Program should undergo significant improvements.

*Key words:* educational program, "Stomatology", international accreditation, formative assessment, summative assessment, appeal, OSCE, assessment audit.

Հոդվածը ստացվել է՝ 26.03.2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 02.04.2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 05.05.2025